

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

#### ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2023թ. դեկտեմբերի 12-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու երաշխավորման մասին:
2. Ֆակուլտետի դեկանի 2022/23 ուստարվա հաշվետվություն:
3. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՄԵՑԻՆ.** Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Արման Ռուբիկի Մարտիրոսյանի դիմումը՝ պրոֆեսորի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

#### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Ա.Ռ. Մարտիրոսյանը դիմել է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար: Նշեց նաև, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ևս իր նիստում միաձայն որոշել է միջնորդել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդին քննարկելու տնտեսագիտության դոկտոր Ա.Ռ. Մարտիրոսյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու հարցը:

2. Ելույթ ունեցավ տ.գ.դ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը: Ներկայացրեց իր անցած ուղին, նշեց, որ ունի բազմաթիվ հրապարակված աշխատանքներ: Մասնավորապես, վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակվել են՝ 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 մենագրություն և 8 գիտական հոդված: Կարևորեց վերջին 2 գիտական

հողվածները, որոնցից մեկը ընդունվել է տպագրության Ինդոնեզիայի Հանրապետությունում, իսկ մյուսը տպագրվել է Ռուսաստանի Դաշնությունում՝ շեշտադրելով այն փաստը, որ ինքը հանդիսանում է այն գիտական պարբերականների խմբագրական կոլեգիայի անդամ, որտեղ նշված 2 հողվածներից մեկն ընդունվել է տպագրության, իսկ մյուսն արդեն տպագրվել է: Հավելեց, որ խմբագրական կոլեգիայի անդամ է նաև ՀՀ-ում լույս ընծայնվող «Այլընտրանք» գիտական հանդեսում:

3. Տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը և տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը հարցեր հնչեցրեցին. արդյո՞ք տ.գ.դ., դոցենտ Ա.Մարտիրոսյանի մատնանշած պարբերականները ներառված են Scopus և Web of science գիտաչափական շտեմարաններում, ո՞րն է տ.գ.դ., դոցենտ Ա.Մարտիրոսյանի հրատարակած վերջին 2 հողվածների հետազոտության թեման և ինչպիսի՞ արձագանքներ է ստացել այլ համալսարաններից:

4. Տ.գ.դ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը առաջին հարցադրմանը պատասխանեց՝ նշելով, որ իր կողմից հիշատակված գիտական պարբերականները ներառված չեն Scopus և Web of science գիտաչափական շտեմարաններում, սակայն յուրաքանչյուրը ներառված է իր երկրի ԲՈԿ-ի ընդունելի պարբերականների ցանկում, յուրաքանչյուրի խմբագրական կոլեգիայի անդամները աշխարհի 9 երկրներից են: Հավելեց, որ այս պահի դրությամբ աշխատում է Scopus ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում հողված տպագրելու ուղղությամբ: Հողվածների բովանդակության մասով հնչեցված հարցադրմանը պատասխանեց հակիրճ՝ նշելով, որ ուսումնասիրությունն առնչվում է Քեյնսյան խաչի նոր մեկնաբանություններին՝ գծապատկերային տարբերությունների համատեքստում:

5. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը նշեց, որ Ա.Ռ. Մարտիրոսյանը արժանի է պրոֆեսորի կոչման:

Տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ Ա.Ռ. Մարտիրոսյանին առանձնակի ներկայացնելու կարիք չկա: Շեշտադրեց, որ ֆակուլտետը գիտական կադրերի պատրաստման, գիտական կոչումների շնորհման տեսանկյունից շատ անելիքներ ունի: Հավելեց, որ Ա.Ռ. Մարտիրոսյանի օրինակը պետք է վարակիչ լինի մյուս գործընկերների համար, քանի որ նա կարողացել է դոկտորականը պաշտպանել և 1 ասպիրանտի ատենախոսություն ղեկավարել: Ամփոփելով ելույթը տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ միանում է տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանի կարծիքին:

Ելույթ ունեցողները մատնանշեցին Ա.Ռ. Մարտիրոսյանի գիտական և մանկավարժական գործունեությունը և առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

6. Քվեարկության բաց կամ փակ կազմակերպման առնչությամբ հնչեցին տարբեր կարծիքներ, խորհրդի նախագահ ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց քվեարկել այդ հարցը: Քվեարկության արդյունքում՝ գիտխորհրդի 17 անդամ կողմ էր պրոֆեսորի գիտական կոչում հայցելու վերաբերյալ քվեարկությունը կազմակերպել փակ, գիտխորհրդի 6 անդամ կողմ էր պրոֆեսորի գիտական կոչում հայցելու վերաբերյալ քվեարկությունը կազմակերպել բաց, գիտխորհրդի 5 անդամ չմասնակցեց քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Արման Ռուբիկի Մարտիրոսյանի դիմումը՝ պրոֆեսորի գիտական կոչում հայցելու վերաբերյալ դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Միքայելյան (նախագահ), տ.գ.թ., ասիստենտ Կարեն Սահակյան, ՏԿՖ «Ֆինանսներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վերգինե Դանիելյան:

**ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի անդամ Վերգինե Դանիելյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 28-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.դ., դոցենտ Ա.Ռ. Մարտիրոսյանի օգտին՝ կողմ է քվեարկել գիտխորհրդի 6 անդամ, դեմ՝ 21, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 1:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով Արման Ռուբիկի Մարտիրոսյանը չի երաշխավորվել պրոֆեսորի գիտական կոչում հայցելու համար:

2. **ԼՍԵՑԻՆ.** Ֆակուլտետի ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2022/23 ուստարվա հաշվետվությունը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տարեկան հաշվետվությամբ ամփոփ ներկայացրեց ֆակուլտետի գործունեությունը 2022-23 ուսումնական տարում:

Նախ՝ հաշվետվության առաջին մասում, նշեց արձանագրված հաջողությունները. «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանների և դասընթացի նկարագրիչների վերանայումը, Կառավարման և գործարարության ամբիոնի կողմից բակալավրիատի ավարտական կուրսի և մագիստրատուրայի ուսանողների արտալսարանային դասերի կազմակերպումը, բիզնես խնդիրների լուծման ակումբի հիմնադրումը, բիզնես խնդիրների լուծման Հայաստանյան առաջնությանը և մի շարք միջոցառումներին ու մրցույթներին ֆակուլտետի թիմի մասնակցությունը, ամբիոններում տպագրված թվով 3 ուսումնական ձեռնարկները, համակարգիչների և անհրաժեշտ լաբորատոր գույքի ձեռքբերումը: Ամփոփ ներկայացրեց իրականացված գիտական հետազոտությունների շրջանակը՝ ֆինանսական հիմնախնդիրներին, ազգային անվտանգության համակարգի ուսումնասիրություններին և սոցիալական հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունների շարքը:

Հավելեց, որ ներկայում ֆակուլտետում իրականացվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմատիկ 2 դրամաշնորհ՝ 1) «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» (Ղեկավար՝ Կ.Խաչատրյան) և 2) «Տնտեսության թվային վերափոխումների կարգավորումը ՀՀ-ում. գործիքներ և ռեժիմներ» (Ղեկավար՝ Ռ.Գևորգյան), վերջինս ավարտվել է ս.թ. նոյեմբերի 30-ին: 2023թ. մարտից ֆակուլտետում մեկնարկել է նաև Ավստրիական զարգացման գործակալության APPEAR ծրագրի կողմից ֆինանսավորվող «Մասնակցային մոտեցմամբ էկոհամակարգային ծառայությունների գնահատում՝ Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով (ECOSERV)» թեմայով գիտական դրամաշնորհը, որն իրականացվում է Վիեննայի Բնական ռեսուրսների և կյանքի մասին գիտությունների համալսարանի (BOKU) հետ համատեղ (Հայաստանյան կողմի ղեկավար՝ Կ.Խաչատրյան):

Ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ թվարկված ձեռքբերումները առավելապես պայմանավորված են ֆակուլտետում գիտակրթական գործունեություն ծավալող շուրջ 116 դասախոսի, այդ թվում՝ 13 գիտության դոկտորի, 15 պրոֆեսորի, 41 դոցենտի, 77 գիտությունների թեկնածուի ներուժով: Գրանցված հաջողությունների պահպանման և զարգացման, ֆակուլտետի գիտակրթական ներուժի արդյունավետ օգտագործման նպատակով 2023-24 ուստարում ստեղծվել են տարբեր աշխատանքային խմբեր, որոնցից յուրաքանչյուրը կոորդինացնելու է կոնկրետ ուղղության շրջանակներում իրականացվող աշխատանքները:

Հաշվետվության երկրորդ մասում ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց ֆակուլտետում գրանցված անհաջողությունները կամ դժվարությունները՝ ամբիոններում ոչ բոլոր դասախոսներն են մասնակցում

ուսումնամեթոդական աշխատանքների բարելավման գործընթացին, միջամբիոնային համագործակցության մակարդակը չափազանց թույլ է, գիտական հրապարակումների թիվը բավականին փոքր է. տարեցտարի նվազում է, ինչպես նաև խիստ անհավասարաչափ է, ինչպես ամբիոնների կտրվածքով, այնպես էլ՝ դասախոսների: Մտահոգիչ է այն, որ հաշվետու ժամանակահատվածում Scopus և Web of science գիտաչափական շտեմարաններում գրեթե ոչ մի հոդված չի հրապարակվել, ֆակուլտետում ոչ մի գիտաժողով չի կազմակերպվել, պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին նույնպես ակտիվ չի եղել:

Մտահոգիչ են նաև մագիստրատուրայի կրթական ծրագրերի գծով ընդունելության արդյունքները, ֆակուլտետն ակտիվ չէ միջազգային համագործակցության բնագավառում, գործատուների և բիզնեսի հետ տարվող աշխատանքները գրեթե բացակայել են (բացառությամբ Կառավարման և գործարարության ամբիոնի), թույլ է կապը շրջանավարտների հետ՝ շրջանավարտների համայնքի սահելի ներուժի պայմաններում, հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ ամենամյա գիտաժողովին ֆակուլտետից ոչ մի ուսանող չի մասնակցել և ֆակուլտետի նյութատեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ շոշափելի տեղաշարժեր չեն արձանագրվել:

Թվարկված անհաջողությունները կամ դժվարությունները պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններին անդրադառնալով՝ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց դրանց հաղթահարման քայլերը և ժամկետները.

1) մինչև 2023-24 ուստարվա ավարտը պլանավորված է արմատապես բարելավելու ֆակուլտետում նյութատեխնիկական բազան, հատկապես թիրախավորվել է ֆակուլտետի բոլոր լսարանները ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ ապահովելն ու կրթական նորագույն տեխնոլոգիաների ներդրումն ու արմատավորումը:

2) մշակվել և 2023-24 ուստարվանից արդեն կիրառվում է դասախոսների կատարած աշխատանքների գնահատման համակարգը: Մասնավորապես, յուրաքանչյուր դասախոսի համար հաշվարկվելու է գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշ (KPI), ինչն ըստ էության առաջին փորձն է ԵՊՀ-ում: Տվյալ ցուցանիշի հաշվարկը հնարավորություն է տալու հստակ և օբյեկտիվ գնահատելու յուրաքանչյուր դասախոսի կատարած աշխատանքը:

3) 2024 թվականին պլանավորված է 8 գիտական հոդվածի հրապարակում Scopus և Web of science գիտաչափական շտեմարաններում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ազգային ծրագրերի ավագ համակարգող, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը, տ.գ.դ., պրոֆեսոր

Վ.Բոստանջյանը: Մատնանշվեց Scopus (Q1, Q2, Q3, Q4) ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականներում տպագրությունների խնդիրը՝ որպես ֆակուլտետի վարկանիշը պայմանավորող կարևորագույն գործոն: Որպես խնդրի հեշտ լուծում՝ առաջարկվեց համագործակցել հայազգի այն տնտեսագետների հետ, որոնք արդեն տպագրվում են այդ պարբերականներում՝ մասնավորապես «Հայաստանի տնտեսագետների ասոցիացիայի» հետ համագործակցությունը կնպաստի խնդրի լուծմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2022/23 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

### **3. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում**

**3.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

#### **3.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները երեքն են՝ Աղաբաբյան Անի Արթուրի (3-րդ տարի), Պողոսյան Ռիմա Մարտիրոսի (3-րդ տարի), Գրիգորյան Ալիսա Ռաֆիկի (3-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսությունը քննարկվել է ամբիոնի նիստում, եղել են որոշ դիտողություններ, որոնք հաշվի են առնվել և կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ատենախոսությունը գտնվում է ավարտման փուլում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Ռիմա Մարտիրոսի Պողոսյանի «Ռեքոտատեխնիկական նորարարությունների տնտեսական գնահատման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, հավաքագրվել են նյութեր ատենախոսության 3-րդ գլխի վերաբերյալ: Ասպիրանտը հանձնել է կրթական բաղադրիչի մաս կազմող պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները և քննությունները: Տպագրվել է 1 հոդված, ևս 1-ը գտնվում է տպագրման փուլում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Ալիսա Ռաֆիկի Գրիգորյանի «Բնակչության միգրացիոն հոսքերի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)»

թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարկոսյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, հավաքագրվել են նյութեր ատենախոսության 3-րդ գլխի վերաբերյալ:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը մատնանշեցին, որ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 29.11.2023թ. կայացած թիվ 6 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Անի Արթուրի Աղաբաբյանի (3-րդ տարի), Ռիմա Մարտիրոսի Պողոսյանի (3-րդ տարի), Ալիսա Ռաֆիկի Գրիգորյանի (3-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

**3.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի ժ/պ՝ տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը՝ նշելով, որ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները երկուսն են՝ Մովսիսյան Քնքուշ Հովիկի (4-րդ տարի), Կլեկյան Ծովինար Հարությունի (3-րդ տարի):

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հայտնեց, որ Քնքուշ Հովիկի Մովսիսյանը «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսությունն ամբողջությամբ ավարտած հանձնել է ամբիոն՝ ուսումնասիրելու և ատենախոսության վերաբերյալ եզրակացություն տրամադրելու համար: Ատենախոսության շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում հրատարակվել են 4 գիտական հոդվածներ, իսկ 2-ը երաշխավորվել են հրատարակման: Ասպիրանտը մասնակցել է և ավարտել բոլոր պարտադիր և ընտրովի դասընթացները, հանձնել է մասնագիտական քննությունը:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հայտնեց, որ Ծովինար Հարությունի Կլեկյանը «Հարկային համակարգի զարգացման և հարկային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսության 1-ին գլուխն ավարտել է: Այդ գլխում անդրադարձ է կատարվել հարկերի առաջացման տեսակներին, հիմքերին, տեսությանը, հիմնական սկզբունքներին, մշակմանը և միջազգային փորձին: Աշխատանքներ են տարվում 2-րդ գլուխն ավարտին հասցնելու համար:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը մատնանշեցին, որ Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 01.12.2023թ. կայացած թիվ 3 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Քնքուշ Հովիկի Սովսիայանի (4-րդ տարի), Ծովինար Հարությունի Կլեկյանի (3-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

**3.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը՝ նշելով, որ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները յոթն են՝ Յոլյան Լիլիթ Արամի (4-րդ տարի), Գրիգորյան Սոնա Քաջիկի (3-րդ տարի), Ղազարյան Ամասյա Արմենի (3-րդ տարի), Կարապետյան Տիգրան Արամի (3-րդ տարի), Պետրոսյան Դիանա Ռուբենի (3-րդ տարի), Մարգարյան Հայկանուշ Անդրանիկի (3-րդ տարի), Ալեքյան Հովհաննես Արամի (3-րդ տարի):

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Լիլիթ Արամի Յոլյանը «Մեքենայական ուսուցման կիրառությունը իսելացի քաղաք կոնցեպցիայում» թեմայով



(ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյան) ատենախոսության համար կատարել է մասնագիտական գրականության ուսումնասիրում և իրականացրել է անհրաժեշտ տվյալների հավաքագրում:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Սոնա Քաջիկի Գրիգորյանի «Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատման հիմնահարցերը» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսությունը քննարկվել է ամբիոնի նիստում, եղել են որոշ դիտողություններ, որոնք հաշվի են առնվել և կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Ամասյա Արմենի Ղազարյանը «Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում, իրականացրել է տեսական և էմպիրիկ վերլուծություններ: Հանձնել է «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» պարտադիր դասընթացի, «Գիտության փիլիսոփայություն» և «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» ոչ պարտադիր դասընթացների ստուգաքնները: Տպագրվել է 1 հոդված:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Տիգրան Արամի Կարապետյանը «Ազգային անվտանգության ռազմավարության կարգավորման տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը սահմանադրականության ասպեկտում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում, իրականացրել է տեսական և էմպիրիկ վերլուծություններ: Մասնակցել է «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» կողմից կազմակերպված սեմինարների շարքին. «Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման»-ը, ինչի արդյունքում պատրասվել է վերլուծական նյութ: Հանձնել է «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» պարտադիր դասընթացի և «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» ոչ պարտադիր դասընթացի ստուգաքնները:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Դիանա Ռուբենի Պետրոսյանը «Մարդկային կապիտալի գնահատման հիմնահարցերը» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում և իրականացրել է տեսական և էմպիրիկ վերլուծություններ: Հավաքագրել է նյութեր ատենախոսության վերաբերյալ: Տպագրվել է 2 հոդված:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Հայկանուշ Անդրանիկի Մարգարյանի «Ազգային կրթության կայուն զարգացման տնտեսական և մաթեմատիկական մոդելավորման հիմնադրիչները (սթրեսի դիմադրության

օրինակով)» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ղանթարջյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, հավաքագրվել են նյութեր ատենախոսության 3-րդ գլխի վերաբերյալ: Տպագրվել է 2 հոդված:

Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը հայտնեց, որ Հովհաննես Արամի Ալեքյանը «Տնտեսական աճի վրա ֆինանսական հոսքերի ազդեցության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում և նյութերի հավաքագրում: Իրականացրել է տեսական և էմպիրիկ վերլուծություններ, պետական համակարգում գաղտի և հրապարակային ֆինանսական տվյալների վերլուծություն, մաթեմատիկական մոդելավորման նոր գործիքների ուսումնասիրություն և կիրառում: Հանձնել է «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» պարտադիր դասընթացի և «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» ու «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն» ոչ պարտադիր դասընթացների ստուգարքները:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը մատնանշեցին, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.11.2023թ. կայացած թիվ 6 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Լիլիթ Արամի Յոլյանի (4-րդ տարի), Սոնա Քաջիկի Գրիգորյանի (3-րդ տարի), Ամասյա Արմենի Ղազարյանի (3-րդ տարի), Տիգրան Արամի Կարապետյանի (3-րդ տարի), Դիանա Ռուբենի Պետրոսյանի (3-րդ տարի) Հայկանուշ Անդրանիկի Մարգարյանի (3-րդ տարի), Հովհաննես Արամի Ալեքյանի (3-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

#### 4. Ընթացիկ հարցեր

**4.1 ԼՍԵՑԻՆ.** ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային

(թեմատիկ) ֆինանսավորման 21T-5B178 ծածկագրով «Տնտեսության թվային վերափոխումների կարգավորումը ՀՀ-ում. գործիքներ և ռեժիմներ» թեմայի (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Ալբերտի Գևորգյան) իրականացման ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին հարցը:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Գիտական թեմայի ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ա. Գևորգյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տարեկան հաշվետվությամբ ամփոփ ներկայացրեց թեմայի շրջանակում իրականացված հետազոտությունների արդյունքները, որոնց հիման վրա 1 հոդված տպագրվել է Scopus (Q2) ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում, 1 հոդված ընդունվել է տպագրության Scopus (Q3) ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականում, ևս 2 հոդված տպագրվել է Հայաստանի Հանրապետությունում և լույս է տեսել 1 կոլեկտիվ մենագրություն:

2. Ֆակուլտետի ղեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց կատարված հետազոտությունների կարևորությունը ՀՀ տնտեսության համար և հավելեց, որ գրանցված արդյունքները բավարար հիմք են գիտական թեմայի կատարումը դրական գնահատելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել 21T-5B178 «Տնտեսության թվային վերափոխումների կարգավորումը ՀՀ-ում. գործիքներ և ռեժիմներ» թեմայի իրականացման ամփոփիչ հաշվետվությունը և կատարման արդյունքները գնահատել դրական:

Գիտական թեմայի կատարման արդյունքները գնահատվեցին դրական՝ միաձայն քվեարկությամբ:

**4.2 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի դասախոսներ տ.գ.թ., պրոֆեսոր Գագիկ Գալստյանի և տ.գ.թ., ասիստենտ Անի Գալստյանի համահեղինակած՝ «Տնտեսագիտության հիմունքներ» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի վարիչ տ.գ.թ., պրոֆեսոր Գ.Գալստյանը նշեց, որ սույն ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ ոչ մասնագիտական ֆակուլտետներում դասավանդվող «Տնտեսագիտության հիմունքներ» դասընթացի համար: Ձեռնարկը գրախոսվել է, ամբիոնի նիստում դրվել է քվեարկության: Առաջարկեց հարգել ամբիոնի որոշումը և երաշխավորել տպագրության:

2. Տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ձեռնարկի տպագրությունը ողջունելի է և կնպաստի դասընթացի պատշաճ դասավանդմանը ԵՊՀ այլ ֆակուլտետներում: Հավելեց, որ «Տնտեսագիտության հիմունքներ» դասընթացից բացի՝ որպես կամրնտրական դասընթաց ԵՊՀ այլ ֆակուլտետներում դասավանդվում է նաև «Գործարարության հիմունքներ» դասընթացը և կարևորեց այս դասընթացի համար ևս նման ձեռնարկ ունենալու փաստը: Մատնանշեց, որ երկու գրախոսների դրական կարծիքները և ամբիոնի որոշումը բավարար են ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի դասախոսներ տ.գ.թ., պրոֆեսոր Գագիկ Գալստյանի և տ.գ.թ., ասիստենտ Անի Գալստյանի համահեղինակած՝ «Տնտեսագիտության հիմունքներ» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ուսումնական ձեռնարկը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ:

**4.3 ԼՄԵՑԻՆ.** Լիլիթ Հակոբյանի և Ալվարդ Խառատյանի «Մարդկային կապիտալի գնահատումների և աշխատուժի վերլուծության դերը և նշանակությունն արդյունավետ կառավարման գործում» վերտառությամբ հետազոտական աշխատանքը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Հետազոտական աշխատանքի համահեղինակ՝ «ՊրոՍերվիս-Լ» մարդկային ռեսուրսների հարցերով խորհրդատվական ընկերության տնօրեն Լիլիթ Հակոբյանը ամփոփ ներկայացրեց աշխատանքի երկու բաժինների բովանդակությունը, մատնանշեց հետազոտության առանձնահատկությունը և դրանում դիտարկված խնդիրների գիտազործնական նշանակությունը:

2. Հետազոտական աշխատանքի համահեղինակ՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը ներկայացրեց հետազոտական աշխատանքում ՀՀ ձեռնարկությունների շրջանում անցկացված հարցման արդյունքների տնտեսամաթեմատիկական վերլուծության եզրահանգումները:

3. Տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2 տարի առաջ ֆակուլտետը կնքել է հուշագիր «ՊրոՍերվիս-Լ» մարդկային ռեսուրսների հարցերով խորհրդատվական մասնավոր ընկերության հետ՝ վերջինիս նախաձեռնությամբ: Իրականացվել է

համատեղ ուսումնասիրություն՝ դաշտային աշխատանքներ են կատարվել: Հետազոտությունը միջոցիսցիպլինար բնույթ է կրում, այն գրախոսել են ֆակուլտետի երեք ամբիոնների դոցենտներ՝ տ.գ.թ. Գ.Հայրապետյանը, տ.գ.թ. Կ.Եղոյանը և տ.գ.թ. Վ.Գյոզալյանը: Հնչել են նկատառումներ, աշխատանքը վերափոխվել է, բավարարում է ներկայացվող պահանջներին և կարող է երաշխավորվել տպագրության՝ արդյունքների տարածման:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով երեք գրախոսների՝ «Տնտեսագիտության և ՄՏՀ» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գ.Հայրապետյանի, «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Կ.Եղոյանի, «Կառավարման և գործարարության» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վ.Գյոզալյանի դրական կարծիքները և ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ «ՊրոՄերվիս-Լ» մարդկային ռեսուրսների հարցերով խորհրդատվական ընկերության տնօրեն Լիլիթ Հակոբյանի և ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ալվարդ Խառատյանի «Մարդկային կապիտալի գնահատումների և աշխատուժի վերլուծության դերը և նշանակությունն արդյունավետ կառավարման գործում» վերստառությամբ հետազոտական աշխատանքը երաշխավորել տպագրության:

Հետազոտական աշխատանքը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ:

*ԵՊՀ ՏԿՑ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝*

*Կ. ԽԱՉԱՏԵՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՑ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝*

*Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*